ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(փաստաթղթային կոդ՝ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0) **ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակներ՝ Գ. Պապոյան Ա. Մեխակյան	**««**Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝ 1) «մաս» բառը փոխարինել «մասերով» բառով 2) «4-րդ» բառից հետո լրացնել «և 5-րդ» բառերով 3) «դեպքի» բառը փոխարինել «դեպքերի» բառով:	Ընդունվել է	
2.	Հեղինակներ՝ Գ. Պապոյան Ա. Մեխակյան	**««**Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով. «Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից, անշարժ գույքի կադաստր վարող մարմինը անշարժ	Ընդունվել է	

			գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումն իրականացնում է հաշվառող մարմինների կողմից տրված՝ անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ անշարժ գույքի մասով կատարված են անշարժ գույքի հարկի (կազմակերպությունների համար՝ տվյալ հաշվառող մարմնում հաշվառված բոլոր օբյեկտների մասով անշարժ գույքի հարկի) վճարումները:»:		
3.	Կառավարություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Նախագծի 1-ին հոդվածում «8-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «8-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերով, քանի որ փոփոխվող դրույթը սահմանված է նշված հոդվածի 2-րդ մասում:	Ընդունվել է	
4.	Կառավարություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող դրույթում «դատական ակտերի հարկադիր կատարողի» բառերը փոխարինել «հարկադիր կատարողի» բառերով՝ նկատի ունենալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:	Ընդունվել է	
5.	ՀՀ ԱԺ աշխատակազմի Փորձագիտական և վերլուծության	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած չճանաչել:	Ընդունվել է	

	Վարչություն	մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0			
6.	ՀՀ ԱԺ աշխատակազմի Փորձագիտական և վերլուծության վարչություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Նախագծի վերնագրում եւ 1-ին հոդվածում վերնագրից հետո նշված «ՀՀ» հապավումը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	
7.	ՀՀ ԱԺ աշխատակազմի Փորձագիտական և վերլուծության վարչություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ նշել օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը՝ ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների:	Ընդունվել է	
8.	ՀՀ ԱԺ աշխատակազմի Փորձագիտական և վերլուծության վարչություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Նախագծով նախատեսված փոփոխություններն ու լրացումը վերաբերում են «Գույքահարկի» մասին օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին, ուստի առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «1-ին մասի» բառը փոխարինել «2-րդ մասի» բառով, իսկ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում «1-ին մասի» բառերը հանել, քանի որ Նախագծի 1-ին հոդվածով արդեն իսկ նշված է, որ նշված դրույթում են կատարվելու փոփոխություններն ու լրացումը: Բացի այդ, Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում նշված «1-ին մասը» չունի որեւէ կետ կամ պարբերություն:	Ընդունվել է	

9.	ՀՀ ԱԺ աշխատակազմի Փորձագիտական և վերլուծության վարչություն	««Գույքահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Պ-387-26.11.2019-ՏՀ-011/0	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Գույքահարկի» մասին օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի 1-ին եւ 2-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչելու դեպքում վերը նշված 2-րդ կետով նախատեսված դրույթն անավարտ եւ անորոշ է ստացվում, որը եւս անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:	Չի ընդունվել	